

# ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

108

## Սփյուռքի ներկայացուցիչներ

Արմեն Գարսևեան. «հի սփյուռքի նախարարության ստեղծումից յետոյ ամէն ինչ աւելի դիւրին է եւ որակով»

## ՀՀ սփյուռքի նախարարութիւն

Արեւիկ Պետրոսեան. «արուեստիս լեզուով ուզում եմ բարձրաձայնել հայրենիքի շուրջ հայութեան միասնականութեան գաղափարը»

Ա. Եղիազարեան. «եթէ ուզում ենք նպաստել հայապահպանութեանը, պէտք է իրականացնենք հայրենադարձութիւն»

**Սփիւռքի ներկայացուցիչներ**



**Արմեն Գարպետյան. «հի սփիւռքի նախարարութեան ստեղծումից յետոյ ամեն ինչ աւելի դիւրին է եւ որակով»**  
2011-03-29

**-ինչպէ՞ս ձեւաւորուեց ՌԴ Պերմ երկրամասի հայկական համայնքը:**

-Պերմ գնացել եմ 1988 թուականին ուսման պատճառով: Չէի էլ պատկերացնում, որ կարող է մնամ այնտեղ: Այն ժամանակ Պերմում շատ քիչ հայեր կային` ընդամենը երեսուն հոգի: Յետոյ ճանաչեցի մարդկանց, ովքեր աւելի քան յիսուն տարի այնտեղ էին ապրում: Համայնքային մշակութային կենտրոն ստեղծելու առաջին փորձը եղել է 1991 թուականին: Բայց քանի որ Սովետական Միութեան փլուզումից յետոյ խնդիրները շատ էին, ոչինչ չէր ստացում: 2000թ.ընկերներով նորից հաւաքուեցինք միասին եւ այս անգամ կարողացանք պաշտօնապէս գրանցել հայկական համայնքը: Որպէս գործող գրանցուած կազմակերպութիւն` 11 տարի է արդէն գոյութիւն ունենք: Ի դէպ, անցեալ տարի մեծ շուքով նշեցինք կազմակերպութեան գործունէութեան 10-ամեակը: Հանդիսութեանը ներկայ էր նաեւ ՀՀ սփիւռքի փոխնախարար Ստեփան Պետրոսեանը, ով իր հետ բերել էր նաեւ ՀՀ նախագահի շնորհաւորական նամակը: Տօնին մասնակցեցին Պերմի երկրամասում բնակւող աւելի քան 8 համայնքների նախագահները: 2000 թ-ից ստեղծեցինք նաեւ հայկական դպրոց ու համայնք:

Իսկ 2001 թուականից սկսած փորձում էինք Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի կառուցելու համար թուլտութիւն եւ հողատարածք ձեռք բերել: Հողատարածքի հարցը, սակայն, լուծել կարողացանք միայն 2007 թուականին: 2008 թ-ին օծուեց եկեղեցու հիմքը: Հիմա կառուցման աշխատանքները ընթացքի մէջ են. 2012 թուականին այն արդէն պատրաստ կը լինի: Եկեղեցու կողքին տարածք է յատկացուել նաեւ հայկական դպրոցի, մշակութային կենտրոնի եւ թանգարանի համար: Կառուցում է հանդիսութիւնների սրահ, որից ստացուած հասոյթը պատկանելու է եկեղեցուն, որպէսզի ապահովի եկեղեցու ֆինանսական կայունութիւնը:

**-հայկական մշակոյթն ի՞նչ չափով է պահպանւում Պերմում:**

-Մեր դպրոցը տասը տարեկան է: Երեխաներս տարբեր տարիքի են. մեծ տղաս քսան տարեկան է, աղջիկս` տասնետօթ, փոքրը` ինը: Բոլորը կարողանում են հայերէն կարդալ, գրել, պարել, երգել... այ սա է հէնց ապացոյցը, որ մշակոյթը պահպանւում է:

**-դժուար չէ՞ արդեօք երեխաներին դպրոց ներգրաւման աշխատանքը:**

-Սկզբում դժուար էր. համայնքը դեռ նոր էր: Ծնողները երեխաներին չէին բերում դպրոց, իսկ հիմա արդէն 40 աշակերտ ունենք: Կայ նաեւ օտարազգիների խումբ: Ուսումնական ծրագրի դասագրքերն էլ ստանում ենք ՀՀ սփիւռքի նախարարութիւնից: Դրանից առաջ չկար կոնկրետ ծրագիր. անում էինք այնքան, որքան խելքներս կտրում էր: Չնայած յարկ է նշել, որ հայկական դպրոցի ուսուցիչները բարձրագոյն կրթութիւն ունեն: Կարելոք է նաեւ այն փաստը, որ հայկական կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչների աշխատանքը վարձատրւում է Պերմ քաղաքի բիւջէից: Հայկական դպրոցը համարւում է Պերմի երկրամասում ապրող ազգային փոքրամասնութիւնների շարքում ամենամեծաքանակ

աշակերտներով դպրոցը:

**-ի՞նչ տուեց Սփյուռքին ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը:**

-ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումից յետոյ ամեն ինչ ավելի դիւրին է եւ որակով: «արի տունէ ծրագրի հանդէպ մեծ հետաքրքրութիւն կայ երիտասարդների մէջ: Նոյնիսկ նրանք, ովքեր մէկ անգամ մասնակցել են, փորձում են երկրորդ անգամ գրանցուել մասնակցութեան համար: Հայկական համայնքի ներքոյ երիտասարդական կենտրոնը ուղղակի վերակենդանացել է այդպիսի ծրագրերի շնորհիւ: Երիտասարդները անում են հնարաւոր ամեն ինչ՝ ավելի ակտիւացնելու Հայաստան-սփյուռք կապը:

**-պէրմում բնակուող ազգային փոքրամասնութիւնների հետ խնդիրներ առաջանու՞մ են:**

-Բացարձակապէս խնդիրներ չեն առաջանում: Մենք առաջատար համայնք ենք: Նոր տարին ու մնացած տօները մենք ենք կազմակերպում եւ միասին տօնում մեր հարթակներում՝ մնացած համայնքների ներկայացուցիչների հետ:

**-մշտական բնակութիւն հաստատած հայերը մեծաթիւ՞ են Պերմում:**

-Հիմա համայնքը բազմաթիւ է: Մեր հաշուարկներով Պերմում կան ավելի քան 45.000 մշտական բնակութեամբ հայեր: Բայց երէկ, երբ երգիչ Թաթայի հետ միասին զրօնում էինք Պերմում, երկու մարդ անցան եւ բարեւեցին մեզ. ես նրանց չէի ճանաչում: Այսինքն՝ Պերմում զրօնելուց արդէն հայը հային է հանդիպում: Իսկ Պերմը հզօր, մեծ քաղաք է:

**ՀՀ սփյուռքի նախարարութիւն**



**Արեւիկ Պետրոսեան. «արուեստիս լեզուով ուզում եմ բարձրաձայնել հայրենիքի շուրջ հայութեան միասնականութեան գաղափարը»**  
2011-04-01

**-ինքնատիպ գաղափար էք առաջարկել: Շարժառիթն ու թեմատիկ առանցքը ո՞րն է:**

-Հայոց մեծ եղեռնը Հայ ժողովրդի համար ոչ միայն կորստի ցաւն ու վիշտն է, անմեղ զոհերն են, այլ հայութեան գաղթը: Հայութիւնը ասես կտրուեց իր արմատներից, պատմական հայրենիքից, սփռուեց աշխարհով մէկ, բայց միեւնոյն է, պահպանեց իր ինքնութիւնը, իր հայ լինելը, իր լեզուն եւ կրօնը: Սա է հանճարը մեր հնագոյն ազգի: Ես՝ որպէս կին արուեստագէտ, արուեստիս լեզուով ուզում եմ բարձրաձայնել համայն հայութեան միասնականութեան եւ հայրենիքի շուրջ համախմբման գաղափարը: Յատուկ այս ծրագրի համար հայկական մանրանկարչութեան թեմաներով ստեղծուելիք տասներկու մեծածաւալ նկարները, որոնցում իմպրովիզացիան շատ փոքր տեղ պիտի ունենայ, ներկայացնելու է այդ միասնութեան գաղափարը: Թեման այնպիսին է, որ պէտք է դիտողին հենց առաջին հայեացքից ճանաչելի ու հասկանալի լինի: «նշխարք Հայաստանիցէ նկարների շարքը հոգուս մղումով նուիրաբերելու եմ այս գաղափարի իրագործմանը: Այս ակցիան կրում է մի քանի հիմնական գաղափներ՝ կին, մայր, արուեստագէտի վերաբերմունքը կատարուած եղեռնագործութեան հանդէպ, Հայոց մեծ եղեռնի զոհերի յիշատակի յաւերժացումը արուեստով եւ աղօթքով, համայն հայութեան միասնութեան եւ համախմբման կոչ, եւ վերջապէս՝ ընծայ Հայաստանից Սփյուռքին:

**-ստեղծուելիք նկարները առանձին խորագրեր կ'ունենան:**

-Շարքի տասներկու աշխատանքներն առանձին խորագրեր չեն ունենայ, եւ բոլորն էլ կը կատարուեն ինձ յատուկ ինքնատիպ եւ արուեստի աշխարհում նոր համարուող ոճով՝ օրգանական ապակու վրայ՝ արծաթով եւ ոսկով: Պահպանելով միջնադարեան մանրանկարչութեան կանոններն ու հիմնական թեմաները՝ հաւաքածուն ներկայացուելու է նոր մեկնաբանութեամբ՝ որպէս հնի ու նորի մի ուրոյն սինթէզ: Իւրաքանչիւր ստեղծագործութիւն իր պատկերի եւ գաղափարի մէջ կրելու է Տէրունական աղօթքի մի մասնիկը: «հայր մեր, որ յերկինս ես...յաջորդը՝ «սուրբ եղիցի անունը քո...է, եւ այսպէս շարունակ...: Իսկ հաւաքական 12 նկարների այս շարքը կը դառնայ ամբողջական մի աղօթք: Սա կարծես նաեւ մի կոչ է՝ «աղօթենք միասին, որը նոյպէս միասնականութեան գաղափարի շուրջ է հաւաքում մեր քրիստոնէայ ազգը: Այս ստեղծագործութիւնների հաւաքածուն կը ներկայացուի իր ամբողջական գաղափարով նախ Երեւանում՝ ցուցահանդէսի բացման արարողութեամբ, այնուհետ նշխարքի պէս կը բաժանուի Սփիւռքի 11 համայնքներին՝ հայ հեգեւոր կենտրոններին կամ կից թանգարաններին՝ որպէս ընծայ Հայաստանից Սփիւռք աշխարհին: Իբրեւ խորհրդանիշ՝ մէկ աշխատանքը կը մնայ Հայրենիքում:

**-ե՞րբ եւ ինչպէ՞ս էք նախատեսում շնորհանդէսը:**

-Ապրիլի չորսին կը լինի առաջին ցուցադրութիւնը նեղ շրջանակների համար, ուր հրաւիրուած կը լինի ՀՀ սփիւռքի նախարարը եւ որտեղ կ'որոշուի նաեւ, թէ որ նկարը որ հայկական համայնքին է յանձնուելու: Իմ շնորհակալութիւնն ու երախտիքն եմ յայտնում ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին այս գաղափարին սատար լինելու եւ աջակցութեան համար: Իսկ մինչեւ ապրիլի 24-ը տեղի կ'ունենայ ցուցահանդէսի գլխաւոր շնորհանդէսը: Խորհրդանշական է նաեւ բացման արարողութեան մտահղացումը՝ իր իւրայատուկ մատուցման մէջ: Նախատեսում եմ ցուցահանդէսի բացումը կազմակերպել երեկոյեան: Բոլոր հրաւիրուածները նախապէս ուղարկուած հրաւիրատոմսերի մէջ կ'ունենան եկեղեցական մումեր, կրակայրիչներ եւ Տէրունական աղօթքը: Կոմիտասի անուան լարային քառեակի կատարումների ներքոյ հիւրերը կը հաւաքուեն մուտքի մօտ, յարակից բացօթեայ տարածքում, որտեղ կը կատարուի բացման արարողութիւնը: Հոգեւորականը կոչ կ'անի հրաւիրուածներին վառել մումերը եւ միանալ աղօթքին: Լոռութեան մէջ կը լսուի խաւարը լուսաւորող եւ բոլորին համախմբող Տէրունական աղօթքը: Աղօթքը ինքնին մարդկութեանը համախմբելու հզօր ուժ է:



**Ա. Եղիագարեան. «Եթէ ուզում ենք նպաստել հայապահպանութեանը, պէտք է իրականացնենք հայրենադարձութիւնը»**

2011-03-28  
Սփիւռքի նախարարութեան մշակած «հայրենադարձութեան գործընթացի կազմակերպման հայեցակարգէ-ն արժանացել է ՀՀ կառավարութեան հաւանութեանը: Վերջինիս նշանակութեան, դերի ու ոլորտի յետագայ քայլերի մասին «արմենպրես-ը գրուցեց նախարարութեան Հայրենադարձութեան եւ հետազօտութիւնների վարչութեան պետ Արման

Եղիագարեանի հետ:

**-պարոն Եղիազարեան, ի՞նչ կը փոխի հայեցակարգի ընդունումը մեր իրականութեան մէջ: Ին՞չ նշանակութիւն կ'ունենայ այն:**

-Մենք գործ ունենք գաղափարախօսութեան հետ: Այն նախանշում է, թէ ինչ է լինելու, այսինքն՝ եթէ ուզում ենք հայրենադարձութիւն, ինչ պետք է անենք: Համաշխարհային փորձը, եւ մասնաւորապէս՝ հայկականը, ցոյց է տալիս, որ եթէ ունենք մեծ սփիւոք, որտեղ կայ հայապահպանութեան խնդիր, եւ ժողովրդագրական, տարածքային-ռազմավարական ու եւս մի քանի նմանօրինակ խնդիրներ՝ Հայաստանում, ապա դրանց լուծման հիմնական միջոցներից մէկը հայրենադարձութիւնը պետք է լինի: Եթէ ուզում ենք նպաստել հայապահպանութեանը Մփիւոքում եւ ժողովրդագրական իրավիճակի բարելաւմանը Հի-ում, պետք է իրականացնենք հայրենադարձութիւն: Երբ մշակում էինք հայրենադարձութեան հայեցակարգը՝ որպէս տուեալ գործընթացի գաղափարախօսութիւն, ելնում էինք տիրող իրավիճակից: Մենք ունենք 3 միլիոն 200 հազար հայ Հայաստանում, 7-7.5 միլիոն հայ՝ Մփիւոքում, եւ յարաբերութիւնների կառուցումը, այս ամէնից բացի, նախանշում է նաեւ հայրենադարձութիւնը, որի նպատակը գլխաւորապէս հայապահպանութիւնն է, ինչպէս նաեւ Հայաստանի ժողովրդագրական խնդիրների լուծմանը նպաստելը: Մենք, այդ հրամայականից ելնելով, ձեռնարկեցինք այս գործընթացը: Նախարարութեան աշխատանքի երեք հիմնական ուղղութիւններն են՝ հայապահպանութիւնը, համահայկական ներուժի համախմբումն ու հայրենադարձութիւնը:

**-որո՞նք են հայեցակարգի գլխաւոր խնդիրները եւ հիմնական նպատակները:**

-Հայեցակարգի հիմքում դրուած չէ աշխարհասփիւռ հայութեան զանգուածային հայրենադարձութեան կազմակերպումը եւ այդ գործընթացի կանոնակարգումը: Սահմանուող դրոյթները վերաբերում են այն անհատներին, որոնք ցանկութիւն կը յայտնեն կամովին բնակութիւն հաստատել Հայաստանում: Նրանք կարող են լինել անհատներ կամ ընտանիքներ: Այսօր արդէն այդպիսի մարդկանց որոշակի հոսք կայ: Հայեցակարգի նպատակը եւ խնդիրներն են՝ սահմանել «հայրենադարձ եւ «հայրենադարձութիւնէ հասկացութիւնները, առանձնացնել հայրենադարձութեան հետ կապուած այն առաջնահերթութիւնները, որոնք ենթակայ են պետական կարգաւորման, յստակեցնել կառուցակարգերը, ամրագրել «հայրենադարձութեան մասին ՀՀ օրէնքի գլխաւոր սկզբունքները:

**-ըստ հայեցակարգի՞ ո՞վ է համարուելու հայրենադարձ:**

-Երբ ասում ենք «հայրենադարձ, նկատի ունենք Հայաստանից դուրս բնակուող հայկական ծագմամբ մարդուն, որը ՀՀ քաղաքացի չէ, կամ լինելով ի սկզբանէ այլ պետութեան քաղաքացի՝ ձեռք է բերել նաեւ ՀՀ քաղաքացիութիւն: Իսկ քաղաքացիների հարցերը կարգաւորում են միգրացիոն օրէնսդրութեամբ, ըստ այդմ՝ հայրենադարձ կարող է համարուել ոչ ՀՀ քաղաքացին:

**-ինչպէ՞ս է կանոնակարգուելու գործընթացը:**

-Հայրենադարձութիւնը՝ որպէս գործընթաց, ունի տրամաբանական սկիզբ եւ աւարտ, սկսում է տուեալ անձի կողմից հայրենադարձուելու ցանկութիւն յայտնելուց եւ աւարտում է Հայաստանի կեանքում նրա լիակատար ինտեգրմամբ: Այս ճանապարհին այն հարցերը, որոնք պետք է լուծուեն պետութեան կողմից, մեզ մօտ շարադրուած են

«հայրենադարձության փուլերը եւ կ'առուցակարգերը գլխում: Միւս գլուխն ուղղակի վերաբերում է ինտեգրման ձեւերին: Ինտեգրումը մենք բաժանել ենք մի քանի ուղղութիւնների, որոնցից, մասնաւորապէս, կարելու է սոցիալ-տնտեսական, հասարակական-կենցաղային եւ իրաւական ուղղութիւնները: Այսինքն՝ այս ամբողջ գործընթացը պետք է յանգեցնի «հի լիարժէք քաղաքացիէ կարգավիճակին»:

**-ի՞նչ դեր ունի քաղաքացիութիւն ստանալու գործընթացը հայրենադարձության իրականացման մէջ:**

-Նշեմ, որ հայրենադարձութիւնն ուղղակիօրէն չի յանգեցնում քաղաքացիութիւն ստանալուն: Աւելին, որոշ հայրենադարձներ կարող են քաղաքացիութիւն ձեռք բերել մինչեւ հայրենադարձուելը: Իսկ երէ սփիւռքահայր չունի ՀՀ քաղաքացիութիւն, ապա նրա համար քաղաքացիութիւն ստանալը դառնում է հայրենադարձի ինտեգրման կարելու փուլերից մէկը: Այսինքն՝ քաղաքացիութիւնը տրամադրուում է ինտեգրման ընթացքում, որպէսզի հայրենադարձը կարողանայ լիարժէք ինտեգրուել Հայաստանում: Բայց գործընթացը քաղաքացիութեամբ ոչ սկսում է, ոչ աւարտում: Այն պահից, երբ հայրենադարձը կը ստանայ ՀՀ քաղաքացիութիւն, նրա իրաւունքները կը հաւասարեցունեն ՀՀ քաղաքացու իրաւունքներին, իսկ նրան որպէս հայրենադարձի տրուած արտօնութիւնները կը մնան մինչեւ ինտեգրման փուլի աւարտը: Այդ որոշակի արտօնութիւնները կը նպաստեն նրա ինտեգրմանը: Մասնաւորապէս՝ մենք նախատեսում ենք մասնագիտական, լեզուական դասընթացների կազմակերպում, վարկերի մասով որոշակի արտօնեալ պայմաններ, պետական ուղղորդում, աջակցութիւն եւ այլն:

**-ինչպիսի՞ն է եղել պատկերը մինչ այսօր, ինչպէ՞ս է կարգաւորուել այս ոլորտը:**

-Մինչ այսօր համապատասխան գաղափարախօսութիւն եւ օրէնք չեն եղել, երեւոյթը չի կանոնակարգուել: Հայկական ծագումով մարդկանց համար եղել են արտօնութիւններ՝ ՀՀ կացութեան յատուկ կարգավիճակի տեսքով:

**-իսկ ինչպիսի՞ն է պատկերը ներկայումս հայկական սփիւռքում:**

-Սփիւռքում ապրում է մօտ 7-7.5 մլն հայ: Նրանց որոշ մասը Հայաստանի անկախութեան վերականգնումից յետոյ հաստատուել է հայրենիքում: Այսպէս. 2006-2009 թթ-ին ՀՀ կացութեան յատուկ եւ մշտական կարգավիճակ է ստացել շուրջ 3 հազար սփիւռքահայ, 2005-2009 թթ-ին անշարժ գոյք է գնել շուրջ 15 հազար սփիւռքահայ, եւ վերջին երկու տարուայ ընթացքում ՀՀ քաղաքացիութիւն է ստացել շուրջ 10 հազար սփիւռքահայ:

**-ի՞նչ փուլում են ներկայումս աշխատանքներն այս ուղղութեամբ, եւ մշակուած հայեցակարգի բովանդակութիւնը որքանո՞վ է իրագործելի հայաստանեան իրականութեան ներկայ պայմաններում:**

-Այն արտօնութիւնները, ուղղութիւնները, որ սահմանում է հայեցակարգը, լիովին իրագործելի են: Հիմք ենք ընդունել Հայաստանի ներկայ պայմանները եւ հնարաւորութիւնները, այսինքն՝ ինչ կարող է տալ հայրենադարձին Հայաստանն այսօր: Այժմ աշխատում ենք օրէնքի նախագծի, ենթաօրէնադրական ակտերի եւ հայրենադարձների ինտեգրման տարբեր ծրագրերի մշակման վրայ, որպէսզի նախապատրաստենք իրականացման փուլը: Կարելու է օրէնքի ընդունումն է, որը, յուսով եմ, համապատասխան ընթացակարգ անցնելուց յետոյ կ'ընդունուի Ազգային Ժողովի կողմից: Նախագիծը շրջանառութեան մէջ է: Հայեցակարգը՝ որպէս

գաղափարախօսություն, հաւանութեան է արժանացել, ինչի հիման վրայ էլ մենք շարունակում ենք մեր աշխատանքները:

**-որքա՞ն ժամանակում կեանքի կը կոչուի գործընթացի մեկնարկային փուլը:**

-Երկու-երեք տարի է սահմանուած ինտեգրման փուլի համար, դրանից աւել այն տեւել չի կարող:

**-մօտաւորապէս ի՞նչ զանգուած էք սպասում առաջիկայում ընդունելու հայրենիք:**

-Եթէ դատենք վիճակագրութիւնից, հայերը երկու եղանակով են գալիս Հայաստան. նրանք, ովքեր հայեցակարգով նախատեսուած ընթացակարգի կարիքը չունեն, եւ նրանք, ովքեր ունեն: Սահմանագիծը բնականաբար սոցիալական վիճակն է: Սպասուող զանգուածն, ըստ իս, կը տատանուի 1500-ից 2000 մարդու միջեւ: ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար դիմողների թիւն անհամեմատ մեծ է, բայց դա չի նշանակում, որ նրանք բոլորը Հայաստանում ապրելու են: Իսկ «հայրենադարձ հասկացութիւնը նախատեսում է մարդ, որը մշտական բնակութեան է գալիս Հայաստան: «հայրենադարձութեան մասին է ՀՀ օրէնքի ընդունումից յետոյ տեմպերը, կարծում եմ, կտրուկ կաճէն:

**-հայեցակարգի հաւանութիւնից յետոյ որո՞նք են յաջորդ քայլերը:**

-Դրան պէտք է հետեւի «հայրենադարձութեան մասին է ՀՀ օրէնքի ընդունումը, որն արդէն յստակօրէն կսահմանի գործընթացի իրականացման պետական լիազօր մարմին, իրականացման, արտօնութիւնների տրամադրման կարգերը, ուղղութիւնները եւ այլ անհրաժեշտ միջոցառումները:

**Հարցազրոյցը՝ Նելլի Դաթեանի**